

ԲԱԺՆԵԳԻՆ
Ի Պուրկարիս
Տարեկ. 10 ֆր
Վեցամս. 5 "
—
Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "
—
Ամերիկա
2 Տոլ 30 սենդ
—
ԿԱՆԻՈՒԿ



ՊԱՅՄԱՆՔ
Գրութիւնք հո
չեն տրուիր:
—
Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE
—

ՃԱԲԱԹԱՀԱՆԴԵՍ. ԱԶԳՍՅԻՆ ԵՒ ԶԱԽԵԾՏԱԿԱՆ

— Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ. —

Դ. ՏԱՐԻ

— ՅՈՒՆՎ. 20 ՀԱՐԱԹ 1901 —

ԹԻԻ 196

ՊԱՏԱՍԽԱՆՍ

«ԻՐԱՒՈՒՆՔ»Ի ՀԱՐՑԱՊՆԴՈՂՆԵՐՈՒՆ

Չարակամութեան այն բնդհանուր հոսանքին մէջ, ուր այսօր բարեմտութիւնը անհնար եղած է գրեթէ միացած տեսնել գողացող շեշտերու, չէի կարծեր երբէք ճակատիլ ժողովրդական համակրելի խումբի մը, որ թէ՛ քայլարձակ աշխատանքը ընէր դէպի ինձ և թէ՛ միեւնոյն ատեն իր դիմացը ցցուած է՝ առաջին մարտկոցը անտեսէր անուշագիր մոլորումով մը:

ԿՈՒԶԵՍ:

Հարցումը՝ զոր դրած էի «19րդ դարու վերջին քառորդը» վերնագրով ստորագրած յօդուածներուս շարքին տակ, չէի սպասեր երբէք, որ խնդրոյն վերջակէտը նկատուելու միամտութեան մը հանդէպէր. քանի որ անիկա ճշմարտապէս նախագուռն էր լայնարձակ բացուած և, հրաւեր ժողովուրդին, որ տեսնէ իր ցաւերը և անոնցմով զբաղուի, ոչ թէ մէկ երկու յօդուածներով, ոչ թէ այսօր և վաղը, այլ տեւականապէս ու միշտ:

Ափսոս, առանց կարենալ ըսելու թէ տարբեր կրթութեան մը զաւակն եմ, «Իրաւունք»ի յարգելի հարցապնդողներս կ'ապահովեմ սակայն, թէ երբէք մտածած չեմ քանդել առանց չինելու. ինչպէս կ'ենթադրեն իրենք՝ ինձի ուղղած բոց նամակներն մէջ:

ԿՈՒԶԵՍ. Աս բառը կապահովէր արդէն ինձի իմ բոլոր չքմնւանքս, իմ բոլոր արդարացումս, զոր սակայն իրենք անտեսելով, փոխանակ ատ բառով բացուած դռնէն չիտակ չիտակ ներս մտնելու, միամտութեամբ թէ օրուան կըծելու հիւանդութենէն անզգալապէս վարակուած,

ք. չ մը անդին սագին խարխաբելէ յետոյ միայն կ'ազան կը ցցուին դրան առջև ու «չէ՛, չենք ուղեր, բայց ի՛նչ ընել պէտք է» կը պոռան:

Ասով հանդերձ, «Լաւ է անագան քան երբէք» առածին թելադրութեանը ներքեւ շատ շընորհաւորելի կը գտնեմ իրենց այս ընթացքը ու բարեմտութեան և կամ անմեղուկ ժամանցի մը վերագրելով գնդաստիղի ատ բոլոր հարուածները, կը մտնեմ բուն հարցին, որ այնքան շահագրգիռ է մեր ապագային համար:

* *

Խնդիրը՝ ինչպէս գիտեն ընթերցողներս, նաբօլէտն Գի օրէն ի վեր ֆրանսական կրթութեան մեր մէջ, ստացած ահագին ծաւալին և անոր հետեւն քննարկելու վրայ էր:

Բարեբաղդաբար տարակարծիք չենք հարցապնդողներուս հետ փաստակարութեանը մասին ան չպարուած, հիւանդ ու թերթ կրթութեան, որուն զոհ տուինք ամբողջ սերունդ մը և ուրկէ ծնալ ինչպէս ըսած եմ ուրիշ առթիւ. ալ, սրիկաներուն սա խոշոր ջոկատը:

Այո՛, նորը երբէք բուէարկելի բան մը թուելուցած չէ՛ իր հաշույն. կրթութիւնը կը հասկնամ միակ զօրատոր ու միակ առաջին ազդակը նիւթապէս ու բարոյապէս ուժով ցնելու անհատները և անհատներով տոհմը և տոհմով ամբողջ մարդկային ընկերութիւնը: Երբ մեր մտաւորական առաջնորդները կը հիւծին բարիզեան հաղարմտանգ հեշտանքներու մէջ, ալ կրնաք երեւակայել թէ փոխանցումի անխուսաբելի օրինօք ատենք ինչե՛ր չեն նուիրեր տոհմին, բարէ՛ միշտ անոր փճացումին սահմանուած:

Միեւնոյն ատեն խել մը պահպանազական մըտաւորականներու պէս Հինին ալ բարեկամ չեմ երբէք: Ատիկա ալ պիտի նշանակէր պարզապէս ծայրատել բոլոր յառաջդիմական թուիչ և կաղ

ոտքերով ցածկուտելու դատապարտել մարդը։ Միմասական բան մը պիտի ըլլար անոր բոլոր ուստումը տիեզերական ընդհանուր յառաջացումին մէջ, ուր բնաւ չը պիտի հասնէր իրմէ փարսախներով հեռի եզրը ոչ հացին և ոչ ալ մարդկային ու է երանութեան։ պարզ դահճութիւն մը, եթէ մինչև իսկ անոր գուտ ազգային դաստիարակութիւն անունը տայինք։

Ուստի մեզի պէտք է ի հարկէ քիչ մը որոշ ձևի տակ—հիմ ունենալով ազգային դաստիարակութիւնը, ուր պէտք է գգուանօք պահուին մեր տոհմային նկարագիրը շինող բոլոր ազնիւ տարրերը, նոր մըն ալ ընտրել, որ թեւատութեան ծիծաղելիութենէն ազտուէ և հարկ եղած միջոցը ընձեռէ, մարդու պէս ապրելու աշխարհի վրայ, տիեզերական ընդհանուր յառաջդիմութեանը հետ համընթացաբար։

Այդ նորը պէտք է ըլլայ Գերմանականը։

Յրանսականութիւնը անհունապէս կը տարբերին իրարմէ գրեթէ ամեն կէտի մէջ ալ։ Բացորոշապէս կը տեսնենք, որ մինչ Յրանսական կրթութիւնը աւելի ձեռնիւ և գեղեցիկ ու վայելուչ բացատրութեանց ուժ կուտայ, անդին Գերմանականը հիմին հաստատութեան և բուն մտաւոր զարգացումին կը նայի, այնպէս որ մեր արդի գրականութեան մեծագոյն ախտը՝ Քռազարանութիւնը և կամ առանց իսկապէս շնորքով բան մը ըսելու, սիրուն բացատրութիւններով և գրաւիչ դարձուածներով յօդուածներ յօրինելու արուեստը Յրանսական դպրոցին արդիւնքն է, որ մեզի լուրջ ուսումնասիրութեանց ծանր հարկէն կազատէ և թոյլ կուտայ, որ ամեն մարդ ամեն բանի վրայ խօսի հեղինակութեան մը յաւակնոտութիւնով։ Հոս է արդէն որ մեր հանրաւային կեանքի քաոսը կը ստեղծուի։

Յրանսականը կը վառէ մեզի անեզր ու տենչափառ երևակայութեան մը լափիչ հրալիքովը, որ երբեք գոհացում, երբեք բաւականութիւն չը ճանչնար, մինչդեռ Գերմանականը կը դնէ մարդուն ոտքը գործնական հողի վրայ և կը գծէ էն առաջ եսին անձուկ սահմանները, որոց լայն ըմբռնումն ու պաշտումը այնքան ազդեցիկ եղած է մեզ անհատապէս և ազգովին։

Գերմանական կրթութեան էն դնահատելի կողմը տղուն ինքնուրոյն խորհելու և անհատականութիւնը զարգացնելու շանալն է։ այնպէս որ անիկա իր վերջնական զօրեղ նկարագիրը կը կազմէ անբռնազօս, տոհմային բոլոր բնական ազնիւ ձիրքերու տակաւ ու խորարմատ փթթումովը, որուն հզօրապէս կը նպաստէ Գերմանական համալսարանական դրութիւնը, չատ աւելի ազատութիւն տալով ուսանողին՝ դպրոցական աշ

խատութեանց, ուղղութեան դասաւորութեան և քննութեանց վերաբերեալ խնդիրներու մէջ, այնպէս որ հոն միտքը երբեք բռնաբարութիւն չը հանդպիր։

Յրանսական կրթութեան բարձրագոյն աստիճանները կեդրոնացած են ընդհանրապէս գըլխաւոր քաղաքներու մէջ, ուր բնականաբար քաղաքակրթութեան ըրած ալիքներն համեմատ ահաբեկիչ համեմատութիւններ առած է նաև անբարոյականութիւնը՝ իր ամեն ազտու ճիւղաւորումներովը, մինչդեռ Գերմանական էն բարձրագոյն կրթութիւնը՝ իր կրթարաններկայացուցիչներն ունի նոյն իսկ ամենափոքրիկ քաղաքներու մէջ, ուր կրնանք համեմատութեան մօտաւոր եզր մը գտնել մեր ու անոնց կենցաղին միջև և ասով մեր անփորձ սերունդին տալով հանդերձ Բարիզեան բարձրագոյն կրթութիւնը՝ անընչան Բասաուի և կամ փոքրիկ Լայքցիլի մէջ, ճշմարտապէս փրկել զանի բարոյական ամեն ախտէ, որով նախ ինքզինքը և ապա ամբողջ տոհմը կը վարակէ ծայրէ ծայր։

Երանի՛ անոնց, որ իրենց քայլերը չեն ուղղած անգամ մը դէպ ի փառքիե յարեմ և կամ մեր ուսանողներու կացավայրը, ուր անօրինակ ցոփակեցութեան շուայտ կեանքի փլատակներուն տակ ճնշուող սերունդի մը հիւժախտաւորումը պիտի տեսնէին բացօրոշ և էն խոշոր թուրքը նետելով անոնց վրայ, անդառնալիօրէն կըռնակ պիտի դարձունէին ատ մեծ աւերակին։

Վերջապէս ժամանակն է ըսել թէ Գերմանական կրթութիւնը պիտի փրկէ մեզի, ան է, որ պիտի շինէ մեր ետը՝ էն առաջին ախտաւորը, և մեր եսին հետ մեր երիտասարդութիւնը ու մեր հանրային բարօրութիւնը։ Գիտցած ըլլանք թէ չը կայ ուրիշ միջոց։

Բայց թէ ինչպէ՞ս, կը դառնանք յաջորդով ատ հարցին ալ և փերշնապէս կը գոհացունենք «Իրաւունք»-էն հիւրընկալուած համալիրի հարցապնդողները։

(Շարունակելի)

ԹՕՏԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Տօպրիչէն վերադարձող արժանահաւատ անձ մը կը գրէ մեզ հետեւալը։

«Հիւր-փուլեան Տ. Գէորգ քահանան որ ժամանակէ մը ի վեր Տօպրիչի եկեղեցին կը պաշտօնավարէր, ժողովրդային ասացուածին պէս հոն ալ «միւսէրը տա քցած» ըլլալով, սկսած է իր

մանօրհաները դարձնել: Յունվար 12ին խաչահանգիստ մը ըրաւ, ծանուցանելով ժողովուրդին որ «պու. կիւնքիւ խաչահանգիստ եկեղեցի իշխեն տիր, եարբն քի իսէճէիմ խաչահանգիստ իսէ՛ պէնիմ իշխեն օլաճագ տըրո՞» ու իր այս որոշումը գործադրեց. նաև խաչահանգստի պնակին հասոյթը որ հնուց ի վեր եկեղեցւոյ սնտուկը կը մտնէր, կը ճգնէ իր ձեռքը անցունել: Ասկէց զատ, «յիշելիք»ը (գանձանակ) որոշեալ ատենին չի պտտցունելով, բազմութիւն եղած ատենին կը սպասէ, ու շատ անգամ պատարագ ըրած ատենը «ծօ», յիշելիքս պտտցուցէք, հիմա կառնեն կը քալեն» կը պառայ: Քիչ ժողովուրդ գտնուած ատենն ալ դպրաց կը հրամայէ որ արարողութիւնը ծանր բռնեն, որպէս զի «յիշելիք»ին դրամ տուող պէտք եղածին չափ ժողովուրդ հաւաքուի. այդ ժողովուրդը հաւաքուեցաւ ու «յիշելիք»ը պտտեցաւ մի, ալ տնկէ ետքը ա՛րջ պագաղլով, կը հրամայէ որ աքրաւայով լիւտեն ու լնցնեն, ու թէ որ դպիրք չի հնազանդին, ինքը՝ որոտընդոտ «փառք հօր և ուղւոյն» կը կոխէ:

«Տոպրիչի հայ ժողովուրդը ալ ևս սկսած է իւր դժգոհութիւնը յայտնել:»

(Առ այժմ այս տողերը Պուկարիոյ Գեր. Այցելու հովիւին ուշադրութեանը յանձնելով կը խնդրենք որ ատենը հեղ մը այս շնորհունակ տէրպապաին աչքին երևայ:)

—Տեղւոյս Որբախնամի գործ. ժողովը յունվար 15ին տօնախմբութեան և հարսանիքի մը առթիւ հաւաքած է 16 ֆր. 10 սանդիմ. ու այս հրապարակաւ շնորհակալութիւն կը յայտնէ նուիրատուութեան մասնակցող ազնիւ ազգայնոց:

ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՔ ԲՈԺՈԺԻԿԻ

(Շարունակութիւն)

Ըստ ընկալեալ քաւի սովորութեան, այս տարի ալ պիտի ունենանք մաղաղաներնուն թօ-

փերը շառցնելու հաճար թօփ նետող խանութպաններ:

Այս տարի ալ անցած տարուան պէս ուռուցիկ ծրագրերնեւրով բայց մէջի-ֆօժեան նիւթերով կարգ մը թերթեր կամ հանդէսներ պիտի ծնին... քանի մը օր միայն ապրելու համար:

Պիտի տեսնենք դթասէր (?) ու աղքատասէր (?) պարոններ, որոնք իրենց պատճառաւը քաւարաններու մէջ ճգնել դատապարտուալ մեղաւորուհիներուն համար «աղքատ ու ողորմելի ընտանիքներ են» ըսելով՝ ի նպատակ անոնց կեանքը խուսմին ներկայացումներ սարքեն:

Պիտի ունենանք թաղական անդամներ, որոնք իրենց նոր-լէնկին ընկերակիցներէն ժաշիգով փոխառութիւն ըրած ըլլալուն համար խորհրդարանին մէջ լեզունին կարճ ըլլայ, ու անոնց ամեն յարմար կամ անյարմար որոշումներուն «ամեն եղիցի» պիտի ըսեն ըստ կոյկոյ-ճիական դրութեան:

Պիտի տեսնենք կարգ մը զոքանչներ, որոնք օժտի և հարսնիքի ծախք չընելու համար իրենց փեսացուները պիտի համոզեն աշխկնին առած ամիսի մը չափ ուրիշ քաղաք մը փախչելով հոն կարգուելու, ու ինքզինքնին անոնց դէմ բարկացած ցուցնելով սոսկալի անէծքներ տեղացնելէ ետքը մէկ երկու ամիսէն զանոնք գրկաբաց պիտի ընդունին՝ ըսելով, «պօյերնիդ սիրեմ որ պէճէրմիշ ըրիք»:

Պիտի տեսնենք ինքզինքնին իրենց ընտանեացը հաւատարիմ ցուցնող բայց անհաւատարմութեամբ օձիքնին ձեռք տուող պարկեշտ (?) ամուսիններ:

Վերջապէս այս տարի ալ պիտի տեսնենք աչքերնին կոյր ամուսիններու և ականջնին խուկնիկներու վիթխարի բանակներ:

Ասոնցմէ զատ ներկայ տարիին մէջ պիտի լսենք կամ տեսնենք այնպիսի անակնկալներ՝ որոնց համար մատերնիս պիտի խածնենք... փրցնելու աստիճան:

Եթէ այս ըսածներս չի կատարուին, ես ալ աշխարհիս երեսը թող Բոժոժիկ չի կոչուիմ:

ՎԵՐՋԱՑՈՂ 19-րդ դարին ԳԻՏԵՐԸ

Հակառակ անօգուտ վիճարանութիւններու, անցաւ այն, որ քաղաքակրթութեան, յառաջդիմութեան և լուսաւորութեան դար կը կոչուէր: Երկաթի դարն էր այն, շոգիի դարը, մեքենականութեան դարը:

Սակայն սկեհտիկը, նուրբ ժողովուրդ մը, հեղինօրէն կը կրկնէ քաղաքակրթութեան, յառաջդիմութեան, լուսաւորութեան դար, ուղելով հաւկցնել թէ սին ու խաբուսիկ բառեր են անոնք, չնարակ մը աւելի կամ նուազ հաստ խառով, և թէ էական փոփոխութիւն չկայ՝ դարուն սկիզբին ու վախճանին մէջ: Համամիտ եմ իրեն մի քանի տեսակէտներու մէջ, բայց և այնպէս կը հաւատամ թէ կայ իրաւան, գիտական յառաջդիմութիւնը: Հարեանցի ակնարկ մը նոյն իսկ պիտի բաւէ ասոր ճշմարտութիւնը ըմբռնելու:

*. Երկաթի դարը սուրի դար մը ըլլալէ աւելի խոփի, գործիքի, մեքենայի դար մը եղաւ: Թնդանօթներու գոռումին, կիրքերու պոռթկումին քով ունեցաւ այն աշխատանքի խաղաղ, լըռին ու ներշնչող մթնոլորտը, Դիակներու վրայ բարձրացող արիւնաներկ գիւցալներու քով եղան ուրիշ շատ մը ճշմարիտ գիւցալներ, որոց պատկերները, ժողովուրդներու բարօրութեամբն ու երախտագիտութեամբը հիւստած, յաւետ անթառամ պիտի մնան, թաղ կոչուին ասոնք ճէնները, Ուադ, Սթէֆէնսըն, Բասթօն, Էտիսըն և տակաւին այնքան ուրիշներ:

Հիւստիսթիւնները, միջոցը, ժամանակն ու մարդկային խաղաղ ու արդիւնաւոր գործունէութեան հակառակող արգելքները, ահա մարդկութեան բուն թշնամիները, որոց հետ կռուեցաւ Գիտութիւնը, շատ բան ըրաւ անոնց դէմ, բաղմաթիւ հսկայ ճակատամարտներ շահեցաւ, որոց հետեանքն եղաւ ճարտարութեան մեծագոյն բարգաւաճումը, բարօրութեան ու նոյն իսկ եղբայրութեան անամեմատ կերպով աճումը:

Ծաղկախոտի դէմ պատուապտուած ծնաւ 19-րդ դարը. բան մը, որոյ շնորհիւ, հաւանականաբար, կրցաւ խուսափել չարագոյնացման կանխատեսած «վերջ աշխարհի»էն: Անգլիացի ճէնները գտած պատուաստը բիւրուոր մանուկներու կեանքը փրկեց, մաքառելով ծաղկախոտի դէմ: Իրաց այս շարքին մէջ մնալով, կը հանգիստանայ դարուն կէսէն վերջ, Ֆրանսայի ամենէն հոյակապ ու անաղարտ փառքերէն և մարդկութեան մեծագոյն բարեբարներէն մէկուն, ամմահ Բասթօնին, որ մարդուն կեանքին դաւադրող ու զայն այնքան անգթօրէն փճացնող թշնամիները, ոչ նուազ

անգթօրէն մէջտեղ հանեց, նոյն իսկ իրենց մանրագիտական ամրոցներուն մէջ բռնելով դանոնք: Միքրոպներու լէզէտը, ահա աղետալի ու սոսկալի թշնամին, որ շնորհիւ Բասթօնի երկնաձիր հանճարին ի լոյս եկաւ: Այսօր գիտութիւնը մութին մէջ խարխալելով չի կռուիր, այլ իր թըշնամին ունի մանրագիտական վրայ գաւաճ և չի շերտ մէջ բանտարկած: Ինքն արդէն, վարպետը, գտաւ անոնցմէ մէկուն դարմանը, կատաղութեան դարմանը: Իր ւշակերտները, հաւատքով ու անձնութեամբ լեցուն, քաջութեամբ շարունակեցին ու կը շարունակեն իր հիանալի գործը: Ռու մը *disinfecter* միքրոպին դէմ կը մաքառի իր չիճուկովը, ու մանուկները կազատէ այդ խեղդող շարիքէն և խոչափողի հատման տաժանելի գործողութենէն: Երեւն մը ժանտախտին դէմ կը մաքառի, Գալմէդ մը թունաւոր օձերու դէմ, Մարմօրէք մը արեան թունաւորութիւն դէմ:—Երկար պիտի ըլլար այդ քաջամարտիկներու անուանումը: Այսպէս թշնամին իր ամէն երևոյթներուն տակ մօտէն հսկուած ու պաշարուած է: Անշուշտ ըսել չէ այս թէ վերջնական յաղթութիւնը բոլորովին մօտալուտ է: Կերելի թէ միքրոպներուն մէջ ալ պաշարման գիծերը կտրող անցնողներ կան: Ամէն պարագայի մէջ, սա յայտնի է որ Բասթօնի շնորհիւ բժշկութիւնը, վիրաբուժութիւնը, հիւանդանոցները, առողջապահութիւնը, այսինքն մէկ բառով, կեանքը՝ մեծապէս շահած են, ճանչնալով իրենց թաքուն թշնամին ու անոր համեմատ զինուելով անոր դէմ:

Նպատակս չէ ամէն ճիւղերու մէջ մտնել ու հոն կատարուած յառաջդիմութիւնները մատնանիշ ընել: Գիտութիւնը նոյնքան փայլուն յաղթանակներ տարած է նաեւ միջոցին ու ժամանակին վրայ: 19-րդ դարն իր նախորդէն կտակ ընդունեց շողիին, որուն անմիջական հետեանքն եղաւ բազմապատկել մարդուն ոյժը, հեռաւորութիւնը շնչել, ալգերու ու ժողովուրդներու յարաբերութիւնները շառցնել և տարօրինակ թռիչ մը տալ վաճառականութեան, ճարտարութեան և գործունէութեան բոլոր ձևերուն, շնորհիւ ճէյմս Ուաթի, որ շոգեշարժ մեքենան հնարեց: Յամբ ու փտանգալի առագաստանաւերուն յաջորդեց շոգեհաւը, որ ծովեղբրքի քաղաքները, երկիրներն իրարու կապեց: Ուրիշ անգլիացի մը, Ճորճ Էմքէֆէնսըն 1814ին առաջին շոգեշարժ կառքը նետեց երկաթուղիին վրայ, որ ալգերու անձուկ սահմանները պիտի խորտակէր, կտրել անցնելով լեռ ու սար: Վերջապէս, ուրիշ ամէն տեսակ շոգեշարժ մեքենաներ, հետզհետէ ստեղծուելով, կատարելագործուելով, երկիրը վերջին ծայր արգաւանդ ըրին, ճարտարագործութիւնը գրե-

Թէ ստեղծեցին: Հա՛րկ է միթէ խօսիլ հեռագ-
րին, հեռաձայնին, լուսաձայնին, ձայնագրին վը-
րայ, որ միջոցը կը ջնջեն գաղափարին առջև և
կամ զայն կը տարրացնեն: Ամբէռի, Էօրչդէտի,
Պէլի, Էտրսընի գեղեցիկ հանճարները ձօնած
են զանոնք մարդկութեան, և Հեռցի, Փռէնէլի,
Մաքսուէլի, Դէսլարի և տակաւին ուրիշ անմահ
հանճարներու շնորհիւ աւելի գործնական, աւե-
լի հիանալի գործիքներ գործած են անոնք մար-
դուն ձեռքին մէջ: Անթել հեռագրին, անթել
հեռաձայնը կը յաջորդէ, ու օր մը կարելի պի-
տի ըլլայ Ամերիկայէն Եւրոպա գէ՛մ առ գէ՛մ խօ-
սիլ, իբրև թէ իրարու մօտ ըլլային: Ո՞վ չէ հիա-
ցած Ռէօնթիէնի Ճ ճառագայթներուն ու անոնց
արդէն իսկ այնքան բազմապատիկ գործածութիւն
ներուն վրայ: Նիւթը արգելք մը չէ ալ, ևս ա-
նոնց համար, հսկայ լեռը թափանցիկ է անոնց
առջև: Հազիւ թէ գիտութիւնը ժամանակ ունե-
ցած էր իր այս յաշմանակները արձանագրելու,
Օուլիսկի Մ ճառագայթները մէջտեղ կուգան, նոյն
քա՛ն խորհրդասուր, նոյնքան զօրաւոր: Դարը այս
մողական անծանօթներովը կը վերջանայ, որոնք
անծանօթներու շարքի մը առաջին եզրերն են
միայն: Հա՛րկ է յիշել լուսանկարը, որ ձեռք կը
յաւերժացնէ և որ այսօր պիւնօգիւղէն կոչուած դը
լուսթեան շնորհիւ, հետզհետէ իրականութեան
գոյն կսուռնէ: Այս յառաջ բերուածները բաւա-
կան են անշուշտ ապացուցանելու թէ գիտակա-
նօրէն իրական յառաջդիմութեան, լուսաւորու-
թեան դար մը եղաւ այն, որ ելեկտրական լու-
սով ալ լուսաւորուելու պատիւն ունեցաւ: Գիտա-
կան յառաջդիմութիւն ըսել է, այնքան իրարու
հետ սերտ կերպով կապուած են անոնք:

Երկաթի դարն երկու ահագին ոյժեր կը կտա-
կէ իր յաջորդին. ելեկտրականութիւնն իր վեր-
ջին ըմբռնումին մէջ եւ հեղուկացած օդը: Շո-
գիլի դարուն ելեկտրական դարը պիտի յաջորդէ,
և եթէ հարկ է մկրտել մետաղի մը անունովը,
ալիւմինիումի դարը պիտի ըլլայ քսաներորդ դարը:
ՄԷՆՆՈՒ

ԳԵՂԵՑԻԿ ԽՕՍՔԵՐ

Այն որ իր որդւոյն արհեստ մը չի սորվեց-
ներ, զանի գոլութեան կը պատրաստէ:

Թալանոս

Կուգէ՞ք հարուստ ըլլալ, չափաւորեցէ՞ք ձեր
փափաքները:

Սենեկա

Սէրն ալ ճիշդ գինիի պէս է, եփածն ալ կայ
չեփածն ալ. անուշէն ալ կը գտնուի կծուէն ալ:

կայ որ հինալով աւելի պատուական կըլլայ և
կայ որ երթալով քացախ կը գառնայ:

Պռարս

Կանանց համար սիրտը յաւէտ միլիոնատէր է:

Պաշտպ

Արտասուքը կնոջ առաջին գէնքն է:

Սենդ-էփրօնի

Մեծամտութիւնը աւելի պատճառ կըլլայ
կանանց կորստեանը քան թէ սէրը:

Տիսթրո

Երանի անոնց որք օրորոցին մէջ կը մեռ-
նին, վառն զի մօր մը ժպիտներէն ու համբոյրնե-
րէն ի զառ բանի մը ծանօթ չեն:

Եունկ

Ոչը՝ միայն մէկ պատասխան ունի, որ է Այո:
Ոչութիւնը նշանակութիւն չունի: Ոչինչը չկայ:
Ձէռօ չկայ: Ամեն բան բան մըն է: Չկայ բան մը
որ ոչինչ ըլլայ:

Վ. Հիւկօ.

ԿՍՍԻԹ

ԽՕՍԲՈՎ ԱԶԳԱՍԷԻՐՆ ԲՕԱԿԸ

Տե՛ս սա մարդուկը, գիտէ՛ իր երես,
Որչա՛փ խանդոտ է աղքատին ի ահս.
Խոր հառաչանքներ կը հանէ սրտէն,
Երբ տեսնէ խեղճեր ինկած դէս ու գէն:

Խօսի, համոզէ, քարոյիչ կտրած,
Որ տրուին անոնց տուն, հագուստ եւ հաց.
Բայց այն պայմանաւ՝ որ ինք չի տայ ստակ,
Զի քսակին հետ չի լինիր կատակ:

Տե՛ս սա մղուսին, գիտէ՛ իւր արարք.
Որ միշտ ժամ կերթայ ու չի խորեր պահք,
Կարծես ճգնաւոր Անտոն մ'է գարձած.
Օր մէկ ժու՛մ՝ կ'ուտէ Մեծ Պահքին նա հաց:

Խօսի, յորդորէ որ շինուին ժամեր,
Նոյնպէս եւ բոլոր խարխլած վանքեր.
Բայց այն պայմանաւ որ ինք չի տայ ստակ,
Զի քսակին հետ չի լինիր կատակ:

Տե՛ս ինչպէս աղւոր թափէ լեզուներ,
Ինչպէս խնամով տողած է բառեր.
Նշաւակելով անտարբերութիւն,
Որ ցուցուի յաւէտ հանդէպ որբերուն:

Կազմել յորդորէ նոր որբանոցներ,
Օտար որսորդէն փրկել Հայ որբեր.
Բայց այն պայմանաւ որ ինք չի տայ ստակ,
Զի քսակին հետ չի լինիր կատակ:

Ահա այսպէս է շատերուս վիճակ,
Ձեւին ու գրին, խօսքին ենք ատակ,
կրթական գործի որոշման պահուն,
կարծես ես ու եփ կելլէ մեր արին:

Բայց գործնականին երբ հասնի խնդիր,
Ամենքս մէյմէկ կողմ՝ կըլլանք ցան ու ցիր:
Ձի պայմանն այն էր, որ չի տայինք ստակ,
— 2է՛, բսակին հետ չի լինիր կատակ:

Գ. Պ.

ՏԵՄԵՐԻՔ

Աժանս Բոժոժիկ և Ընկ.

Բարիկ

Անհիմն է այն լուրը թէ պատուոյ ատենը
տեղի պիտի ունենայ:

Իրազեկ ակմբոց մէջ կըսուի թէ՝ «Մարտը
թերեւ հրատարակուի... գալ տարուան մարտին»:

Ժընէվ

Որոշուեցաւ նախառ. քաղաքի նախորդ կո-
միտէին կարկտանաւոր հաշիւները հրատարակել,
անոր ուտել խմելէն երեք տարի ետքը:

Նոյնպէս որոշուեցաւ Պ. քաղաքի 28 անուու-
կի խաչագողները պատժել, անոնց մեռնելէն քը-
սանը հինգ տարի ետքը:

Քամչաթքա

Մեր վարժարանաց մատակարարութեան
ստորագաս պաշտօնեայք՝ աժան փայտ գտնելու
համար երէկ ըրիկուն ուշ ատեն խաններն ու մէյ
սանները եօզրանայի ելան ու վերջապէս իսկէթէ
խաճեսիի պէս բեռցուած երկու կառք փայտ ա-
ռին 21 ֆրանքի: (Սոյն գումարով ամառը հինգ
կառք կառնուէր): Այս առթիւ քարտուղարու-
թեան կողմէ որոշուեցաւ ազդարարել Պ. ուսու-
ցիչներուն որ ինքանքն ձեռքէ չի ձգեն ու հակա
ռակ մէկ երկու օրէ ի վեր տիրած մեղմ օդին՝
առտուընէ մինչև իրիկուն եօլեսիի փայտ չի
վառեն:

Տոպրիչ

Ծնունդի տուն—օրհնենքէն ու չի մնալու հա-
մար Տ. Գ. քահանան հրամայեց դպրապետին որ
եկեղեցական արարողութիւնը շունչը կտրելու
աստիճան շուտով լիւտէ, լմնցնէ: Դպրապետը

տեսնելով որ աս մարդուն հետ չպիտի կրնայ
գլուխ ելնել, շապիկը հանեց ու առաւ քալեց:

Թոնքին

Գլուխը օղիէն տաքցած մինտէր—մօրուք
պարոն մը՝ եկեղեցւոյ մէջ պսակագրութեան մը
ատեն ձայնաւորի շապիկ մը հագած՝ ինքնակոչ
սարկաւազի պաշտօնն ստանձնեց, ու խղիւղին զօ-
րութեամբը չկրնալով հանդարտ կենալ, մաղմը-
նաց վար պիտի իյնար, եթէ լուսարարը չի հաս-
ներ ու սեղանէն վար չառներ այդ սարկաւառ-
գամուլ մոխիրը:

Մալակա

50-եոց դերասանուհի մը որ իր դողդոջուն
ձայնին ու կթոտ շարժումներուն հակառակ 18
տարեկան սիրուհի մը դերը կատարել յանդ-
նած էր, երբ իր դէմը գտնուող 22 տարեկան
սիրահար երիտասարդին. «ոհ, կը սիրեմ՝ զքեզ»
ըսաւ, հանդիսական մը նստած տեղէն «զաւկի՛դ
թէ թողանդ պէս,» հարցուց, որ ընդհանուրի
քահաբահին ու ծափահարութեանը արժանացաւ:

Քամչաթքա

Բաւական բարեկեցիկ մէկ երկու ազգայինք
թաղ. խորհրդարան դիմելով հալսնիքի մը հրա-
մանին աժան—կարապետ ձեռք բերելու համար
հետեւեալ սպառնալիքը ըրին.

«Էֆէնտըմ, ատ րուխսաթ բուսուլասին 20
ֆրանքի չի տաք իսէ՛ 21 տիտանք բոսիմ տ'եր-
թանք, 22 տի տանք կաքոյիկին տ'երթանք,
էնճամիւլ քէլամ 25 տի տանք ուռումիմ տ'եր-
թանք:»

Բոժ. — Իմամին ու խախամին երթաք իսէ՛
տահա քեարլու կ'ելլաք:

ԳՈՒԹԱՆ

Գութան, հանգէս ամսօրեայ, Հոյադործական, գի-
տական և արուեստական (Պատկերազարդ), մամլոյ ներ-
քեւ է եւ մի բանի օրէն լոյս պիտի տեսնէ, հայ եւ ֆը-
րանսացի աշխատակիցներու աշխատակցութեամբ:

Առ այժմ՝ ամիսը անգամ մը պիտի հրատարակուի
Գութանը եւ իւրաքանչիւր թիւը պիտի բաղկանայ 16
էջերէ: Տարեկան բաժնեպիսն է Թուրքիոյ համար 10 ֆ.
Բուսիոյ համար 6 րուբլի եւ արտասահմանի համար 12
բաժնեգին եւ գրութիւնք զրկել հետեւեալ հասցէին.

Գ. ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ

Էնժէնիէօր—Ակրօնօմի

23 Ռիւ ալ Լա Բօլէժիալ

(5րդ) Բարիկ

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (3)

ՌԵՆԷ ՏՐ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ԳԱՐՄԱՐ-ՄԱՐՄՈՒՆԵ)



Իր խռովքին մէջ, վազեց անկողինն վրայ նետուեցաւ, որուն երկար վարագոյրներն իբրեւ պատանք ծածկեցին դայն, սոսկումի աղաղակ մը զսպեց տեսնելով որ իրեն կը մօտենայ այն մարդը որուն պիտի պատկանէր, և այսօրուան յուզման մը տոկալու անկարող, նուազեցաւ երբ զգաց որ ուսին վրայ երկու շուրթեր համադրմբ մը գրին որ խածուածք մը թուեցաւ իրեն:

Լամպարը մարած էր. թռչուններն ալ լուծ էին. գիշերն իր ընթացքը կը շարունակէր:

Երկար ժամեր անցան այգիէս, և ուրիշ շշուկ չեկաւ խանգարել վիլան մէջ տիրող լռութիւնը:

Երբ Սոլ-Պրոտէ սթափեցաւ, անշուշտ նուազումէ բունի անցած էր, վասն զի լոյսը կ'սկսէր ծագիլ, ու թէն ուժասպառ կը զգար ինքզինքը, սոսկումը նուազած էր բիշ մը:

Աւերի հանդարտելով, կը ջանար հասկնալ թէ ինչ տեղի ունեցած էր: տակաւին ուզելով թերեւս կարծել թէ երազի մը խաղալին եղած է լոկ, և անշարժ կը մնար, աչքերը փակ, չհամարձակելով շարժում մը ընել, առահիւ թէ կ'արթնցունէ այն մարդը որ իր քովը գտնուելու էր և որուն ընկերուհին էր յաւատ:

Յանկարծ մեծ աղաղակ մը լսեց պարտէզէն, որ սարսուռացող զինքը, յետոյ ուրիշ բազմաթիւ աղաղակներ իրարու յաջորդեցին և ինք ելաւ նստաւ սարսափահար, ականջ դնելով այդ մահաշշուկ աղաղակներուն, որոնց մէջ կը թուէր իրեն լսել իր անուան արտասանուիլը մոլեգին շեշտելով:

Հապճեպ բայեր հնչեցին անմիջապէս իր սենեակը տանող նրբանցքին մէջ և գուռը ջանքախուելով, այլալամդ Գէմբով մարդ մը ներս մտաւ և իր վրայ վազեց աղաղակելով:

— Զաւակս, ի՞նչ ըրիք զաւակս:

Լէնկ-Թիէն-Լօն էր:

Տան բոլոր ծառաները անոր ետեւէն եկած էին մինչև սեմին վրայ, բայց չէին համարձակեր ներս մըտնալ:

Մանկամարդ կինը բնազդաբար ձեռքն երկնցուց՝ պաշտպանութիւն խնդրելու համար իր ամուսնէն:

Անկողինը պարապ էր:

Խեղալիք, բան մը չհասկնալով անցած դարձածէն, սոսկալի երազի մը ուղեցուցեանը տակ կարծելով գըտնուիլ, գետին ինկաւ: Հօն, իր փոքր ձեռները միացուցած, նայուածքովը կը հարցափորձէր աները:

Բայց սա այլ ևս չէր տեսնար զայն. ահաբեկ աչքերը սեւեռած էր հարսանեկան անկողինն վրայ: Շուրթերը ջրածորէն իշար կը զարնուէին աւանց ձայն մը հանելու, և դողդոջ բազկով մը, կը ցուցունէր սնարը զոր իր հարսը երեւան հանած էր ոտքի ելլելով:

Ներկաները այս շարժման պատասխանած էին սոսկման միմունջով մը, և իրենց աչքերը չէին գտներ անկողինէն:

Այն ատեն, Սոլ-Պրոտէ ևս գլուխն այդ կողմ դարձուց, բայց շուտով ետեւ նետուեցաւ, սոսկման աղաղակ մը արձակելով, և ծնկան վրայ ինկաւ, երեսը ծածկելով:

Սնդուսէ սնարը որուն վրայ հինգ վայրկեան առաջ դեռ կը քնանար, կը կրէր արիւնաշաղախ լայն ձեռքի մը գորշմը, և թանկագին գոհարատուփը գետին ինկած էր, պարապ և ջախջախուած:

Ծառաները կը լսէին, չհամարձակելով խզել այս տեսարանին մահաշշուկ լռութիւնը զոր միայն կը խանգարէին նոր հարսին հեծկտանքները:

Յանկարծ տիկին Լիււի աղջիկը զգաց որ կը ըստիպէին զինք ոտքի ելլել: Պարտաւորեցաւ հնազանդիլ:

Ամուսնին հայրը, իր ապշուածէն սթափելով, նորէն կը կրկնէր իրեն, այս անգամ կատաղութեամբ.

— Ըսէք տեսնեմ, ի՞նչ ըրիք զաւակս:

— Չեմ գիտեր, կակազեց Սոլ-Պրոտէ, իմ բովս կը կարծէի: Ինչո՞ւ հոս չէ, ինչո՞ւ...:

— Ինչո՞ւ, թշուառակա՛ն, ինչո՞ւ: Կը համարձակի՞ս հարցնել: Օ՛հ, հիմակ պիտի հասկնաս:

Բազուկներուն մէջ բռնեց իշայն, տղու մը պէս դիւրութեամբ սարաւ, և վազելով անցնելէ ետք սրահն ու դարաստանին կէսը, թանձր թաւուտ մը հասաւ, որուն մէջտեղը բրտօրէն գետին ձգեց զայն ըսելով.

— Ահա, թշուառակա՛ն, ահա թէ ի՞նչ էք ըրեր զաւակս, դուն եւ բոլ մեղսակիցդ:

Իր տօնական հագուստներէն զուրկ և երեսը վերջին ջրածգումով մը կծկուած, խեղճ Լէնկ-Թա-Լանկ կը փրուէր հօն, աւազին վրայ, արեան լճակի մը մէջտեղ, լայն վերքով մը որուն բաց շուրթերը մէջտեղ կը հանէին սիրտը:

Այս սոսկալի տեսարանէն, Սոլ-Պրոտէ հասկցաւ թէ զինքը կ'ամբաստանեն գձուձ ոճիրով մը: Անմիջա-

պէս գետին գլորեցաւ, իր ամուսնին դիակին մօտ, կակ-
տենիննրուն մէջաեղ, որոց փուշերը, մեռեալին արիւնովն
արդէն ներկուած, երեսը պատռտեցին:

Գալով լէնկի, բանի մը վայրկեան երկիւղածօրէն
ծնրադրելէ ետք, հրամանները տուաւ ծառաներուն որք
հոն կը գանուէին. յետոյ բնակարան ուղղուեցաւ, ալ
առանց զբաղելու հէք աղջկովը որ իրեն համար մար-
դասպան մըն էր այլ եւս:

Գ.

Զերբակալումը

Կտոր մը կերպասով հազիւ ծածկուած, զոր աւե-
լի ամօթխածութեամբ բան արգահատանքով իր վրայ նե-
տած էր աղախին մը, Սոլ-Պրոտէ միշտ կրած էր պար-
տէզին աւազին վրայ, իր ամուսնին դիակին մօտ, երբ
Քանդոնի ոստիկանութեան վերատեսուէր, որ սուրհան-
գակի մը միջոցաւ իմացած էր եղելութիւնը, իր հետե-
ւորդներովն ու պահակներովն հասաւ:

Այս պաշտօնատարին անունն էր Ֆօ-Հօբ: Երի-
տասարդ, խելացի մարդ մըն էր. քիչ ժամանակէ ի վեր
կոչուած այդ կարեւոր ու գովաւորին պաշտօնին զոր կը
գրաւէր, եւ որովհետեւ զոհին հայրը մեծ վարկ կը
վայելէր, ածապարած էր վազել, իր եռանդը ցուցնե-
լու եւ իր ճարպիկութիւնը ապացուցանելու համար ա-
սանկ առիթ մը ներկայանալուն երջանիկ:

Երիտասարդ լէնկի սպանութեան լուրը այնքան
արագութեամբ տարածուած էր շրջակաները որ, հակա-
ռակ առաւօտեան ժամուն, ահագին բազմութիւն կու-
տակուած էր արդէն վիլաին առջեւ: Ծառաներն ստիպ-
ուած էին ամրափակել անոր դուռները, վասն զի դուռ-
սի սպառնալիքները մանկամարդ կնոջ համար, վախ կու-
տային որ բարեացակամ մէկ բանի անձեր դարաստանը
չմտնեն՝ արդարութեան գործը կանխելու համար:

Ի տես ոստիկաններուն, որք կը ճանչցուէին ի-
րենց գլխանոցին կարմիր զարդերէն, ամբոխը գոհունա-
կութեան վայրագ հուրրա մը արձկեց եւ իր կարգերը
բազաւ, առանց խարաղանի հարուածներու պէտք ձը-
գելու:

Ֆօ-Հօբ իր անունը տուաւ, անեցիները փութա-
ցին ծածկալ բանալ, և ոստիկանութեան վերատեսուէր
պարտէյ մտաւ, որուն երկաթորմը, ի յուսահատու-
թիւն հանգիստեաննրու, անմիջապէս փակուեցաւ իր
հտեւէն:

Լէնկ-Թիէն-Լօ, երեսն երկու ձեռքերուն մէջ,
պանքօի մը վրայ նստած էր զոնէն բանի մը քայլ հե-
ռու:

Ոստիկանապետը անոր մօտեցաւ ու մեղմիւ դպաւ
ուսին:

Խեղճ հայրը վեր առաւ գլուխը:

Աչքերն արցունքով լեցուած էին: Հիմակ բարկու-
թեան յաջորդած էր այն համար լռութիւնը որ զօրեղ
մարդերուն յատուկ է:

Հասկնալով որ վայրիկ մը յաղթելու էր իր վիշտին,
ցցուեցաւ քաջութեամբ եւ նշան մը ըրաւ պաշտօնա-
տարին որ իրեն մօտենայ:

Շուտով հասան մահատուէր վայրն, առանց սա-
կայն բառ մը փոխանակելու:

Սօլ-Պրոտէ, կծկուած, ինքիւ վրայ ծածկ հնչպէս
ծաղիկ մը իր կոտորած ցօղին վրայ, անկենդան կերեւէր:

Միայն իր կուրծքին ուժգնաբախ շարժումները,
հեծկտանքներէ ուռած, կը ցուցնէին թէ կենդանի էր:

Գալով դիակին, մետաքսէ լայն պարեգօտ մը ծած-
կած էին վրան եւ երկու ծառաներ երկու կողմը կը կե-
նային, բայց նոյն վիճակին մէջ ուր գտնուած էր նախ
եւ առաջ:

(Շարունակելի)

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՈՐ ԲԱՌԳԻՐԻ ՖՐԱՆՍՈՒԶԱՅ

Պատկերազարդ

Հասոր Առաջին A—H

Սոյն բառգիրքը որ Ն. Ա. Բարձր. Իշխան Լուսին-
եանի երկար տարիներէ ի վեր կատարած ուսումնասի-
րութեանց արդիւնքը կը ներկայացնէ, այս անգամ հը-
րապարակ ելած է 1061 երեսներէ բաղկացեալ: Սա իր
տեսակին մէջ առաջինն է, որովհետեւ գիտական, բու-
սական, ճարտարապետական, բժշկական և այլ ամեն
տեսակ անհամար բառեր պարունակելով, անոնց այլ եւ
այլ իմաստները կը սորվեցնէ ոճերու մանրամասն բա-
ցատրութեամբ և գեղեցիկ պատկերներով: Ֆրանսերէն
և Հայերէն լեզուներուն միանգամայն ծանօթանալ ու
զորներուն համար անհրաժեշտ պէտք մըն է այս: Ամ-
բողջ գործը երկու հատորէ պիտի բաղկանայ: Ա. հա-
տորի թղթակազմին գինն է 25 Ֆրանք: Պուլկարիոյ և
Ռուսմանիոյ մէջ ստանալ փափագողները պէտք է դիմեն
«Հայերի» խմբագրութեան:

Печатница „Взаимость“ — Варна.